ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЕХЕГНУТИ ГЮХАПЕТАРАН

գ. Եղեգնուտ հեռ. ( 037) 6-90-94 093 18 76 56

Թիվ_ 90

« 01 » Յուլիսի 2013 թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՅԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Եղեգնուտի գյուղապետարանը ներկայացնում է Ձեզ, 2013 թվականի հունիս ամսին համայնքի ղեկավարի թիվ 09_Ա որոշումը, կարգադրություն չի արձակվել:

ՅԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 6159-13
«03» 07 2013 թ.

Մի. Չոբանյանին
[illegible]
Կ. Հարությունյանին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնք
Հեռ. (093) 18 – 76 – 56

# ՈՐՈՇՈՒՄ

03 Հունիսի 2013թ. ԹԻՎ 09 - Ա

## ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 01-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի ԹԻՎ 05-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10 –րդ հոդվածով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-4-Ն օրենքի 9-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով, 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 03.04.2013 թվականի թիվ 01/07.1/1187-13 գրությունը *ո ր ո շ ու մ ե մ՝*

1. Եղեգնուտի համայնքի ղեկավարի .2009 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի ղեկավարի Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 01-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

Որոշման N 1 և N 2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Եղեգնուտի համայնքի ղեկավարի 2011 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 18-ի N 01-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 05-Ա որոշումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

03.06.2013
գ. Եղեգնուտ